

5. Алаев Э.Б. Социально-экономическая география. Понятий-терминологический словарь, М., 1983, 350 с.

THEORETICAL-METHODOLOGICAL INTERCONNECTIONS OF SERVICEOLOGY AND GEOGRAPHY

Avagyan A.R., Hayrapetyan H.L.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia humangeo@mail.ru

ANNOTATION

The object of Serviceology is shaped on the unified platform of three forms of thinking: targeted use of natural and social capabilities, assurance quality of service as well as satisfaction of human needs. Three forms of geographical thinking – spatiality, complexity and concreteness, support this trinity. The use of geographical thinking forms increases the capacity of the Serviceology, creates conditions whereby organization and activity of the services sector supports the sustainable development process.

ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սուվարյան Ս.Ռ.

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն
sr.suvaryan@mail.ru

ՀՀ տնտեսության զարգացումը հանդիսանում է ներկա ժամանակների գլխավոր հարցը, ավելին՝ այն դարձել է ազգային անվտանգության ապահովման անխուսափելի պայման: Ինչպես ցույց է տալիս երկրների տնտեսական զարգացման պատմությունը, ամբողջ տնտեսության զարգացումն ավելի մատչելի է, երբ մեկ ճյուղ կամ ենթաճյուղ զարգանում է և մյուսերի զարգացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում: Անկախության տարիներին որպես զարգացման առաջատարներ են հայտարարվել ինչպես արդյունաբերության և գյուղատնտեսության առանձին ճյուղերը, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության բնագավառները: Մեր կարծիքով, ելնելով ՀՀ տնտեսության արտաքին և ներքին միջավայրերի առանձնահատկություններից, և ՀՀ պայմաններում կայուն զբոսաշրջության բազմարկիչ արդյունավետության (մուլտիպլիկատիվ էֆֆեկտի) իրականացման ավելի մեծ հնարավորություններից, առաջարկվում է զբոսաշրջությունն ընդունել որպես ՀՀ տնտեսության վերականգման հիմք: Զբոսաշրջության նախընտրելիությունը պայմանավորված է նաև ավանդաբար առաջատար համարվող ճյուղերի ՀՀ-ում առկա խնդիրներով: Դրանցից կարելի է առանձնացնել գյուղատնտեսության զարգացման բնական և սոցիալ-տնտեսական մեծ ռիսկերը, արդյունաբերության զարգացման ֆինանսական, ռեսուրսային, կադրային

պակասորդը և ժամանակատարությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման սահմանափակ հնարավորությունները՝ կապված ՀՀ գլոբալիզացման ցածր մակարդակի հետ (ITC,ITGS)(4):

ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական կարգավորման հիմքում ընկած են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը (17.12.2003թ. ՀՕ-11-Ն) և Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (ՀՀ Կառավարության հավանությանն է արժանացել 2008թ-ին): Դրանցում զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակ է ընդունվել ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործընթացում զբոսաշրջության ներդրումը մեծացնելը՝ պայմանավորված զբոսաշրջային այցելությունների քանակի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ և աշխատատեղերի ստեղծմամբ [1]: Այդ փաստաթղթերում ներկայացված են նաև պետական քաղաքականության գլխավոր խնդիրները՝ մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների բարեկարգումը, զբոսաշրջային տարածքների մաքրության և հիգիենիկ պատշաճ պայմանների ապահովումը, աղբահեռացման և թափոնների կառավարման արդյունավետ համակարգերի ներդրումը, զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումն ու արդիականացումը, ՀՀ զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, համայնքներում զբոսաշրջության զարգացումը, ներգնա զբոսաշրջությունում ուղեկցորդների վերապատրաստման և լինցենզավորման համակարգի ներդրումը [1]:

Մեր կարծիքով նպատակին հասնելու համար նշված խնդիրներն իրական չեն և չեն բխում զբոսաշրջության համաշխարհային միտումներից: Նախ և առաջ անհրաժեշտ է նույնականացնել զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը: Դա նշանակում է, որ ամբողջ երկիրը և նրա առանձին մասերը պետք է վերածել, ընկալել և հաշվառել որպես զբոսաշրջային դեստինացիա, քանի որ տարածքը և նրանում հանդես եկող բնակական, սոցիալական և տնտեսական բաղադրիչների նպատակաուղղված համակարգումն է միայն ապահովում կայուն զբոսաշրջության զարգացումը [2]:

Նախաձեռնությունն իրականություն դարձնելու առաջին քայլը ՀՀ զբոսաշրջության ոլորտում կորպորատիվ փիլիսոփայություն ձևավորելն է: Դրա համար անհրաժեշտ է փոխել ավանդական մոտեցումները՝ մասնավորապես զբոսաշրջիկին վերաբերելը որպես 1/ «օդից փող վաստակելու հնարավորություն սովոր ռեսուրս», 2/ զբոսաշրջիկին ծառայություններ և ապրանքներ անհավանական բարձր գներով վաճառելը, 3/ բավարարված զբոսաշրջիկներ ունենալու հեռանկարներն առօրյա անհաշվենկատ գործունեությամբ վնասելը, 4/ամեն գնով և շոգոքորթությամբ մրցակիցներից զբոսաշրջիկներ փախցնելը:

Այդպիսի մոտեցումների փոխարեն պետք է *գիտակցել*, որ զբոսաշրջիկների այցելության և այդ տարածքից բավարարված գնալու համար բոլորն ունեն

համամասնական և՛ անելիքներ, և՛ օգուտներ: Վերջինիս իրականացման միջոցը զբոսաշրջային դեստինացիաներ առանձնացնելն է և դրանք, համտեղ կառավարելով, կայուն զբոսաշրջության համար ճանապարհ հարթելն է: Համատեղ կառավարել ասելով նկատի ունենք՝ և՛ առանձին քաղաքացիների, և՛ տեղական կառավարման մարմինների, և՛ պետական կառավարման օղակների միասնականցում կոնկրետ տարածքներում: Միասնականացման համար պետք է բացահայտել և՛ տարածել զբոսաշրջության զարգացման առավելությունները, և՛ յուրաքանչյուրի մասնակցության արժեքը, այսինքն՝ իրականացնել կորպորատիվ փիլիսոփայության մասսայականացում զբոսաշրջության ոլորտում:

ՀՀ-ում կայուն զբոսաշրջության ձևավորման երկրորդ քայլը ՀՀ-ն որպես մեկ միասնական զբոսաշրջային դեստինացիայի և նրա առանձին դեստինացիաների իմիջի բարձրացում է: Ընդ որում պետք է հավասարապես կարևորվեն և՛ ներքին, և՛ արտաքին իմիջները: Ցանկացած զբոսաշրջային երկրում պետք է նախ և առաջ բացահայտել և ներկայացնել յուրաքանչյուր զբոսաշրջային ռեսուրսը որպես գրավչություն, իսկ դրա համար անհրաժեշտ է զբոսաշրջային ինդուստրիա և ենթակառուցվածք: Մենք ունենք բազմաթիվ զբոսաշրջային ռեսուրսներ, բայց դրանք գրավչություններ չեն, քանի որ կա՛մ մենք չենք բավականաչափ արժևորում, կա՛մ չենք կարողանում ներկայացնել դրանց արժեքը:

Համաձայն Ջբոսաշրջության համաշխարհային կազմակերպության ձևակերպման՝ «կայուն զբոսաշրջությունը զբոսաշրջություն է, որը հանգեցնում է բոլոր ռեսուրսների այնպիսի կառավարմանը, որպեսզի բավարարվեն/ապահովվեն տնտեսական, սոցիալական և գեղագիտական կարիքները, միաժամանակ պահպանելով մշակութային ամբողջականությունը, էական էկոլոգիական գործընթացները, կենսաբանական բազմազանությունը և կյանքի համար անհրաժեշտ համակարգերը» [3]: Ելնելով այս պնդումից՝ կայուն զբոսաշրջություն ձևավորելու և զարգացնելու համար առաջարկվում է, որպես համակարգային մոտեցման կիրառություն, այս բնագավառում հիմնվել զբոսաշրջային դեստինացիայի կոնցեպցիայի վրա: Ընդ որում զբոսաշրջային դեստինացիան ընդունվում է տարածք, որում հանդես եկող բաղադրիչները, որպես մեկ ամբողջություն, նպաստում են կամ էլ իրականացնում են զբոսաշրջային ծառայություններ: Դեստինացիաների առանձնացումը բարձրացնում է զբոսաշրջության ոլորտի կառավարման արդյունավետությունը և հնարավորությունը է տալիս կիրառել կայուն զարգացման ինդիկատորները [5]:

Դեստինացիան ոչ միայն զբոսաշրջության կառավարման միավոր է, այլ նաև կայուն զբոսաշրջության իրականացման միջոց: Այն հնարավորություն է տալիս, միջավայրը պահպանելով, առանձին բաղադրիչներ զբոսաշրջային հետաքրքրությունից վերածել զբոսաշրջային ռեսուրսի և գրավչության [6]:

Մեր երկրում զբոսաշրջային դեստինացիայի կազմակերպիչներ կարող են լինել Ջբոսաշրջության պետական կոմիտեն, տուրօպերատորները և գործակալությունները,

տեղական ինքնկառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները: Դրանք ստեղծում են դեստինացիայի կառավարման մարմին, որի գործառույթները պետք է լինեն՝ պլանավորումը, կազմակերպումը, մոտիվացումը, ուղղորդումը, վերահսկումը [7]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ զբոսաշրջային դեստինացիան համակարգ է, որը միավորում է զբոսաշրջիկին, զբոսաշրջության կազմակերպիչներին, դեստինացիայի կառավարման մարմին, զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային ինդուստրիան և ենթակառուցվածքները: Իսկ զբոսաշրջային դեստինացիայի տեսլականն է, ծառայելով զբոսաշրջիկին, ստանալ հավասարակշռված և արդարացի եկամուտ, որն էլ պետք է օգտագործել նպաստելու արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ջբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք, 17.12.2003թ. ՀՕ-11-Ն
2. ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգը (ՀՀ Կառավարության հավանությանն է արժանացել 2008թ-ին):
3. Կայուն զբոսաշրջության կառավարում (SuToMa) Միջազգային բակալավրական և մագիստրոսական ծրագրերի համար նոր մոդուլների մշակում: Դասախոսի ձեռնարկ, 2014թ. 174 էջ,
4. Ջբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Յու.Մ. Սուվարյան; Կատարողներ՝ Ն.Հ. Շահնազարյան, Խ.Ա. Միսիթարյան, Ռ.Ա. Հայրապետյան, Հ.Հ. Համբարձումյան, Մ.Վ. Առաքելյան.- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014, 136 էջ:
5. Устойчивый туризм: учеб.- метод. Пособие / О.С. Шимова. - Минск: РИПО, 2014, 158 с.
6. Bender O. , Schumacher K.P, Stein D. Measuring Seasonality in Central Europe’s Tourism – how and for what? 10th Intern. Conf. on Info. & Com. Techn. (ICT) in Urban Planning and Spatial Development and Impacts of ICT on Physical Space, 2005, pp. 303-309
7. Biederman P. S. Travel and tourism: An industry primer. Upper Saddle River: Pearson Education, 2000

SUSTAINABLE TOURISM AS NECESSITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Suvaryan S.R.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, sr.suvaryan@mail.ru

ANNOTATION

In addition to the fact that sustainable tourism is a reality in many countries of the world, this is necessary in Armenia, since there are no alternatives for a multiplicative role in the economy. The article presents steps to achieve this goal in Armenia. It is recommended to use the concept of tourism destination as a basis for action.